



Երևանի բնօրրանը ներկայացնող «Էրեբունի» արգելոց-թանգարանն այս տարի նշում է իր 50-ամյակը: 50 տարի առաջ, 1968թ. հոկտեմբերի 19-ին իր դռները բացելով հանրության առջև՝ «Էրեբունի» թանգարանն այցելուներին ներկայացրեց Երևանը՝ որպես աշխարհի հնագույն մայրաքաղաք՝ հիմնադրված 2800 տարի առաջ: «Էրեբունի» արգելոց-թանգարանի ստեղծումը, ի նշանավորումն Երևանի 2750-րդ տարեդարձի, անմոռանալի է յուրաքանչյուր հայի հիշողության մեջ: Արդեն 50 տարի ներկայանալով հայ և օտարերկրյա քաղաքացիներին՝ «Էրեբունի» հնավայրն ու թանգարանը դարձել են Հայաստանի և մասնավորապես Երևան քաղաքի այցեքարտը:

Արգելոց-թանգարանը ստեղծվել է Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող 3 նշանավոր հնավայրերի՝ Արին բերդ, Կարմիր բլուր և Շենգավիթ, և այդ հնավայրերից հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների և գտածոների հիման վրա: Այն հանդիսանում է հանրության համար այցելելի միակ հնագիտական արգելոց-թանգարանը Երևան քաղաքում: Գործունեության 50 տարվա ընթացքում իր եզակի արժեքներով, բազմաբնույթ ծրագրերով և միջոցառումներով թանգարանն անում է ամեն ինչ՝ ուրարտական հզոր ժառանգությունը ճանաչելի դարձնելու, պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու համար: Հոբելյանական միջոցառումը կմեկնարկի Էստոնիայի նկարիչների միության նախագահ Արսեն Քյանի կողմից «Էրեբունի» թանգարանի 50-ամյակին նվիրված Արգիշտի արքայի դիմաքանդակի հանդիսավոր բացմամբ: Միջոցառման շրջանակում թանգարանի հյուրերի ներկայությամբ կբացվի դեռևս 2002թ., Էրեբունի-Երևանի 2784-րդ տարեդարձի ժամանակ «Էրեբունի» թանգարանին ի պահ տրված փակ սունդուկը, որի բացումը նախատեսված է եղել Երևանի 2800-ամյակին: Դասական և ազգային երաժշտական կատարումներից հետո միջոցառումը կավարտվի «Էրեբունի» արգելոց-թանգարանի գործունեության մեջ ներդրում ունեցող անձանց «Էրեբունի-50» հուշամեդալով և պատվոգրերով պարգևատրելու հանդիսավոր արարողությամբ:

Միջոցառումը տեղի կունենա 2018թ. դեկտեմբերի 26-ին, ժամը՝ 16:00-ին, «Էրեբունի» թանգարանում (ք.Երևան, Էրեբունի 38, հեռ. +374 10 43-26-61):